

ԻՆՉՊԵՍ ՏԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ (Գայանե Հայրապետյան)

Բանկային գործարքներից մինչև կայքերի բաժանորդագրություններ մեր անձնական տվյալները հասանելի են դառնում տարբեր կազմակերպությունների: Երբևէ մտածե՞լ եք՝ օրական քանի անգամ եք անձնական տվյալների մշակման համաձայնություն տալիս և հետագայում ի՞նչ է լինում այդ տվյալների հետ:

Փորձե՞ք հասկանալ՝ ի՞նչ է տվյալների մշակման համաձայնությունը և որոնք են դրա սահմանները:

Համաձայնությունը անձնական տվյալների մշակման օրինական հիմքն է: Համաձայն Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի՝ այն համարվում է տրված միայն երեք դեպքում՝ երբ ստորագրվել է համաձայնությունը հաստատող փաստաթուղթը, երբ կնքվել է պայմանագիր կամ երբ առկա է բանավոր հայտարարություն համաձայնության վերաբերյալ:

Ի՞նչ տարրեր ունի համաձայնությունը

Համաձայնությունը անձի կամքի ազատ արտահայտումն է, ինչը նշանակում է՝ անձին տալ ընտրություն կատարելու և իրեն վերաբերող անձնական տվյալները վերահսկելու իրական հնարավորություն: Օրինակ՝ անձը ցանկացած պահի կարող է հետ կանչել իր տված համաձայնությունը:

Համաձայնությունը տրվում է ակտիվ գործողություն միջոցով, ինչը նշանակում է, որ անձը գիտակցված է թույլատրել մշակել իր անձնական տվյալները: Օրինակ՝ համաձայնությունը կարող է տրվել գրավոր հայտարարության կամ կայքում առկա կարգավորումներն ընդունելու միջոցով:

Տվյալների մշակման մասին ընդհանրական (բոլոր հնարավոր նպատակներով հավաքագրման և օգտագործման) համաձայնությունը իրավաչափ չէ: Տվյալ մշակողը պարտավոր է մշակման յուրաքանչյուր նպատակին համապատասխան ստանալ նոր համաձայնություն, քանի որ միևնույն անձնական տվյալները կարող են օգտագործվել, մշակվել, տարբեր նպատակներով:

Օրինակ՝ աշխատանքային պայմանագիր կնքելու համար հավաքած տվյալները չեն կարող օգտագործվել մարկետինգային առաջարկներով հանդես գալու համար:

Նախքան համաձայնությունը տալը անձը պետք է տեղեկացվի բոլոր այն դեպքերի և պայմանների մասին, որոնց համար մշակվելու և օգտագործվելու են անձնական տվյալները: Օրինակ՝ ո՞րն է մշակման նպատակը, արդյո՞ք այն փոխանցվելու է երրորդ անձի, ի՞նչ իրավունքներ ունի տվյալների մշակման սուբյեկտը, որքա՞ն ժամանակ կպահպանվի համաձայնությունը և այլն:

Համաձայնության տեքստը պետք է շարադրված լինի պարզ և հասկանալի կերպով՝ հարմարեցված ընթերցողի ունակություններին, ինչը նշանակում է, որ այն չպետք է պարունակի երկիմաստ բառեր և մոլորեցնի անձին:

Իսկ ո՞րն է տվյալների մշակման նպատակը և որքա՞ն ժամանակ է այդ նպատակը իրավաչափ

Յուրաքանչյուր տվյալ մշակող ինքն է նախապես սահմանում տվյալների մշակման նպատակը: Այն պետք է համապատասխանի կազմակերպության սահմանած մշակման վերջնարդյունքին, լինի որոշակի, պարզ և հասկանալի:

Նպատակի սահմանումը հնարավոր է դարձնում արդյունավետորեն համապատասխանել **«նվազագույն տվյալների հավաքման»** սկզբունքին:

Սկզբունքի համաձայն՝ անձնական տվյալների մշակողը պետք է հավաքի միայն այն տվյալները, որոնք ուղղակիորեն անհրաժեշտ են իր առջև դրված նպատակին հասնելու համար: Այսինքն՝ կարիք չկա հավաքել այնպիսի տվյալներ, որոնք հետագայում մշակման համար անհրաժեշտ չեն լինելու: Օրինակ՝ որոշ կայքեր գրանցման համար պահանջում են գրանցվողի բնակության հասցեն, մինչդեռ կայքի օգտագործման համար այդ տվյալը անհրաժեշտ չէ:

Անձը պետք է նաև տեղեկացված լինի իր անձնական տվյալների մշակման հետ կապված ռիսկերի և երաշխիքների մասին: Այս պատճառով յուրաքանչյուր տվյալ մշակող ինքն է կազմում և անձին ներկայացնում իր գաղտնիության քաղաքականությունը, որտեղ նշում են տվյալների հավաքման նպատակները, օրինական հիմքերը:

Համաձայնության առկայությունը չի ենթադրում, որ տվյալները կարող են մշտապես պահվել

Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ համաձայնության հիման վրա մշակվող տվյալները պահպանվում են այն ժամկետով, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է տվյալներ մշակելու նպատակներին հասնելու համար կամ համաձայնությամբ սահմանված ժամկետում:

Քանի որ համաձայնությունը ժամանակի ընթացքում «հնանում է», միջազգային պրակտիկայում համաձայնությունը թարմացնելու օպտիմալ ժամկետը երկու տարի է:¹ Օրինակ, եթե անձը բաժանորդագրվել է սեզոնային գովազդներ ստանալու համար, այդ համաձայնությունը սպառված կլինի այդ ժամանակն անցնելուց հետո:

Առավել երկար ժամանակով անձնական տվյալների պահպանումը հնարավոր է միայն հանրային նպատակներից ելնելով՝ այդ տվյալների արխիվացման, գիտական կամ այլ հետազոտությունների իրականացման, վիճակագրական տվյալների ստեղծման նպատակով: Այս դեպքերում հնարավոր է տվյալները պահպանել անորոշ ժամկետով:

Մի շարք Եվրոպական երկրներ հավաքագրված տվյալները դարձնում են անանուն, երբ նպատակի իրագործման համար անհրաժեշտ չէ, որպեսզի դրանք անհատականացված լինեն: Օրինակ, երբ վիճակագրության համար հավաքում են տեղեկատվություն, ոչ այնքան անհրաժեշտ է անձի անունը, այլ վիճակագրության համար նրանց տրամադրած տեղեկատվությունը:

Անձն ունի մոռացված լինելու իրավունք

Մոռացված լինելու իրավունքի էությունն այն է, որ անձին վերաբերող որոշակի տվյալների հասանելիությունը արգելվում է հենց այդ անձի կողմից:

Եթե անձն իր տված համաձայնությունը հետ է կանչել, ապա տվյալների մշակումը դադարեցվում է, իսկ հավաքված տվյալները ենթակա են որոշակի ժամկետի ընթացքում ոչնչացման (օրինակ՝ հետկանչը ստանալու օրվան հաջորդող **տասն աշխատանքային օրվա ընթացքում**), եթե այն համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված պայմաններին:

¹ Այսպիսի մոտեցումն ընդունված է Մեծ Բրիտանիայի Տեղեկատվության հանձնակատարի գրասենյակի կողմից

ԵՄ ընդհանուր տվյալների պաշտպանության հայտնի GDPR կանոնակարգը նախատեսում է, որ տվյալների մշակման համաձայնությունը հետ կանչելը պետք է կատարվի նույնքան պարզ և արագ, որքան համաձայնությունը ստանալն է:²

Նշենք, որ անձնական տվյալների մշակում հնարավոր է նաև **առանց անձի համաձայնության**, եթե տվյալները ստացվել են հանրամատչելի աղբյուրներից կամ այդպիսի մշակումը նախատեսված է օրենքով:

Միևնույն ժամանակ, առանց անձի համաձայնության արգելվում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակումը, բացառությամբ, երբ մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Այդպիսի տվյալներ են համարվում անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ:

Ի՞նչ նվազագույն տեղեկություններ պետք է ներկայացվեն համաձայնությունը ստանալուց առաջ

Անհրաժեշտ է, որ համաձայնությունը ստանալուց առաջ անձին ներկայացվեն հետևյալ նվազագույն տեղեկությունները.

- Տվյալներ մշակողի ինքնությունը
- Նպատակը
- Նշում այն մասին, թե որ տվյալներն են հավաքվելու
- Ինչպես են օգտագործվելու այդ տվյալները
- Նշում երրորդ անձանց փոխանցելու մասին
- Պրոֆայլինգ լինելու է, թե ոչ³
- Ինչ ժամկետով են հավաքագրվում:

Համաձայնությունը պետք է տրվի մինչև անձնական տվյալների մշակումը սկսելը: Այդ պարագայում հստակ կլինի, որ անձը նախապես ծանոթացել է մշակման պայմաններին և նպատակներին:

² Տես ԵՄ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ, հոդված 7: Ինչպես նաև Proximus NV (Public electronic directories) v Gegevensbeschermingsautoriteit

³ Անձնական տվյալների ավտոմատացված մշակում՝ անհատի մասին որոշ բաներ գնահատելու համար: Օրինակ՝ անձի վարքագծի ուսումնասիրում համապատասխան առաջարկներ ներկայացնելու համար:

Ի՞նչ հետևություններ կարող ենք անել

- Տվյալները պետք է հավաքվեն նվազագույն քանակով՝ միայն մշակման նպատակին համապատասխան
- Յուրաքանչյուր մշակման նպատակին համապատասխան պետք է տրվի առանձին համաձայնություն
- Տվյալների անորոշ ժամկետով պահելն արգելվում է, բացառությամբ որոշ դեպքերի, օրինակ՝ վիճակագրական և հետազոտական նպատակների
- Տվյալները կարող են մշակվել առանց համաձայնության օրենքով նախատեսված դեպքերում
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջել մշակումը դադարեցնել և համաձայնությունը հետ կանչել